ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
("ՀՌՈՑ" ՓԲԸ)

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF HIGH-TECH INDUSTRY
"TELEVISION AND RADIO BROADCASTING NETWORK OF ARMENIA"
CLOSED JOINT-STOCK COMPANY
("TRBNA" CJSC)

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՑԱՆՑ
DIGITAL BROADCASTING PUBLIC NETWORK OF RA

N 28-289
12 մայիս 2023 թ.

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Պրն. Ա. Ավանեսյանին

Հարգելի պարոն Ավանեսյան

Հայտնում եմ Ձեզ, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կողմից հայտարարված՝ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-23/4 ծածկագրով աշխատանքների ձեռքբերման մրցույթի շրջանակում «ԱՍԱՇԻՆ» ՍՊ և «ՏՍԿ-Սվյազստրոյկոմ» ՍՊ ընկերությունների կողմից մինչև փաստաթղթերի շտկման վերջնաժամկետը **իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը չի պարունակել համապատասխան** տեղեկատվություն: <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի բ) պարբերությամբ, ինչպես նաև <Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին> ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտով **պետք է ներկայացնեն միայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված՝ իրենց իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը/,** ինչը պետք է ակտիվ լիներ և պարունակեր տեղեկություններ հայտերի բացման օրվա դրությամբ /30.03.2023 ժամը 12:00/: Կարգի 32-րդ կետի 19)-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նշված տեղեկատվության ներկայացման պայմանների խախտման հետևանքով «ԱՍԱՇԻՆ» ՍՊ և «ՏՍԿ-Սվյազստրոյկոմ» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով և առաջնորդվելով 14.06.2022թ. թիվ 01.1/26-1/10085-2022 ՀՀ ֆինանսների նախարարության գրությամբ՝ Ձեզ եմ ներկայացնում «ԱՍԱՇԻՆ» ՍՊ և «ՏՍԿ-Սվյազստրոյկոմ» ՍՊ ընկերությունների գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը՝ կից ձևաչափով:

Առդիր՝ Որոշում 1 թերթ:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյան

Կատարող՝ Գնումների և մատակարարման
բաժնի պետ Մ. Նիկոլյան
Հեռ. 010 654073

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 0011, ԵՐԵՎԱՆ,ՆՈՐՔ, ՀՈՎՍԵՓՅԱՆ 95 ☎ (37410) 653 773 ☎ (37410) 653 552
Hovsepian st. 95, Yerevan, Nork, 0011, Republic of Armenia E-Mail: tvn@tna.am
secretariat.trbna@hti.am

ՈՐՈՇՈՒՄ

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը՝			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԱՍԱՇԻՆ» ՍՊԸ	07626131	ՀՀ, ք. Իջևան, Նալբանդյան 1/1	անբավարար			11.05.2023 ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-22/4
«ՏՍԿ-Սվյազստրոյկոմ» ՍՊԸ	02586601	ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 24/19	անբավարար			11.05.2023 ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-22/4